Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 84

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծի տեքստային մասում փոփոխություն կատարելու վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի գլխավոր հատակագծի տեքստային մասում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Թույլատրելի օգտագործման ձևեր՝ առանձնատներ, բլոկացված բնակելի տներ, մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ՝ ընդհանուր մակերեսով մինչև 150 քմ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, հասարակական սննդի օբյեկտներ՝ մինչև 50 նստատեղ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մարզական պարապմունքների տարածքներ մինչև 150 քմ, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, հյուրանոցներ և հյուրատներ մինչև 30 տեղ, վարչական, ֆինանսական հիմնարկների և սպասարկման ծառայությունների՝ գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ, մսուր-մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասակար արտանետումների հետ:	**Թույլատրելի օգտագործման ձևեր՝** առանձնատներ, բլոկացված բնակելի տներ, մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ՝ ընդհանուր մակերեսով մինչև 150 քմ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, հասարակական սննդի օբյեկտներ՝ մինչև 50 նստատեղ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մարզական պարապմունքների տարածքներ մինչև 150 քմ, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, հյուրանոցներ և հյուրատներ մինչև 30 տեղ, վարչական, ֆինանսական հիմնարկների և սպասարկման ծառայությունների՝ գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ, մսուր-մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասակար արտանետումների հետ, իսկ 07-057-0314- և 07-057-0315- կադաստրային ծածկագրերով թաղամասերում՝ գլխավոր հատակագծով նախատեսված բնակավայրի բնակելի կառուցապատման հատվածում վերը նշվածից բացի նաև բազմաբնակարան բնակելի տներ:

Կառուցապատման չափորոշիչներ՝ շենքերի և շինությունների հարկայնությունը և բարձրությունը բոլոր հիմնական կառույցների համար մինչև 3 հարկ, բարձրությունը հողի մակերևույթից մինչև հարթ տանիքի վերևը՝ ոչ ավելին քան 12.6 մ, մինչև լանջավոր տանիքի պիպը՝ ոչ ավելի քան 14.2 մ, բոլոր օժանդակ շինությունների համար՝ մինչև հարթ տանիքի վերևը՝ ոչ ավելին քան 4.0 մ, մինչև թեք տանիքի պիպը՝ ոչ ավելի քան 5.4 մ:	**Կառուցապատման չափորոշիչներ՝** շենքերի և շինությունների հարկայնությունը և բարձրությունը բոլոր հիմնական կառույցների համար մինչև 3 հարկ, բարձրությունը հողի մակերևույթից մինչև հարթ տանիքի վերևը՝ ոչ ավելի քան 12.6 մ, մինչև լանջավոր տանիքի պիպը՝ ոչ ավելի քան 14.2 մ, բոլոր օժանդակ շինությունների համար՝ մինչև հարթ տանիքի վերևը՝ ոչ ավելի քան 4.0 մ, մինչև թեք տանիքի պիպը՝ ոչ ավելի քան 5.4 մ, իսկ 07-057-0314- և 07-057-0315-կադաստրային ծածկագրերով թաղամասերում՝ գլխավոր հատակագծով նախատեսված բնակավայրի բնակելի կառուցապատման հատվածում վերը նշվածից բացի նաև շենքերի ու շինությունների, բազմաբնակարանների հարկայնությունը և բարձրությունը բոլոր հիմնական կառույցների համար մինչև 5 հարկ (ներառյալ 5-րդ հարկը), բարձրությունը հողի մակերևույթից մինչև հարթ տանիքի վերևը՝ ոչ ավելի քան 21.0 մ, մինչև լանջավոր տանիքի պիպը՝ ոչ ավելի քան 22.6 մ:

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Հ.Դավթյան

Երևան, «29» « ապրիլի » 2022թ.